

նոյն գործի Բառադարանին¹ մէջ «...Պատմութիւն Ղափանեցոց կամ Դաւիթ բէկի, զորոյ հեղինակ անծանօթ՝ ծանուցեալ է իմ (յէջ 301)»։ Այս զիս կը զարմացնէ, թէ ինչպէս Հ. Ալիշանի մանրախոյզ ու մանրաքննիչ աչքէն վրիպեր է վերեւ յիշուած ձեռագրի շատ հին պիտակը որ անպայման կանխագոյն է քան 1800 թուականը՝ զրի ձեւին և հնութեան անսխալ փաստով։

Բաց աստի՝ թէ իսկապէս Հ. Ղուկաս գրած է Դաւիթ բէկի պատմութիւնը՝ զիտեանք իր իսկ միւս ծանօթ գործերէն, օրինակ «Համառոտ պատմութիւն թագաւորացն Հայոց, և աշխարհագրութիւն Հայաստանի, և աշխարհագրական բառարան, Հ. Ղուկաս Վ. Սեբաստացի», ձեռագիրնոտր, գործ թանկագին՝ զրուած ուրեմն կանուխ քան 1752ը, ուր երբ առիթը կ'ունենայ Սիւնեաց գաւառին վրայ խօսելու՝ նախ կը թուէ բերդաւոր վայրերը Որոտն, Տաթև, Խնածախ, «Ընկեր՝ որ ունի զբերդ, ունի և զմեծ բերդն Խնծուրէսը՝ ուր Մխիթարն սպանաւ ի մերոս ժամանակի, որ իշխէր երկրին Խարանու յետ մահուան Դաւիթ բէկին... Դարձեալ գաւառն Խարան որ և Հարանդ ասի, թէպէտ այժմ ընդարձակապէս առեալ ունի և զԳուրհամ, զՉափնդուր և զայլ գաւառս Սիւնեաց աշխարհին, սակայն յատկապէս ունի զփոքր Սիւնիս և զՀալիձոր ուր բնակէր Դաւիթ պէկն ի մտանելն նորա ի Խարան։ Այս Դաւիթ պէկ էր իշխանագուն և արիասիրտ՝ ազգաւ Հայ ինքն և ամենայն հետեւողը իւր. և առաքեցաւ ի յիշխանաց իշխանէն վրաց ի պահպանութիւն երկրին Խարանու՝ ըստ խնդրոյ Հայոց բնակչացն։ Եւ թէ ո՞րպէս եմուտ ի Խարան, և թէ ի զալ նորա ո՞րպէս ժողովեցան առ նա բնակիչքն Խարանու և զորքան մարտս պատերազմաց ետուն ընդդէմ Պարսից և Օսմանցոց և զորքան յաղթութիւնս արարին՝ տեսցես ի համառոտ պատմութեան զոր գրեցաք», և շարունակելով՝ կու տայ համառոտիւ Դաւիթ պէկի զօրավարներուն անունները իրենց բանակ-

ներուն թուով և կայանին կամ բանակետդներուն անուններով, ինչ որ բաղդատութեան համար կարելոր է՝ միւս երկու ձեռագիրներուն լուսարանութեան։

Այս պատմական — աշխարհագրական գործին գիրը յար և նման է յիշեալ «Պատմութիւն Ղափանցոց» ձեռագրին և երկուքն ալ նոյնպէս յար և նման Հ. Ղուկասի զրին՝ ծանօթ իր նամակներէն։ Ուստի կասկած չի մնար թէ այս է Հ. Ղուկասի ակնարկած աշխատութիւնը իր իսկական ձեռագրով։ Նշան նաեւ իր նախնական հարազատութեան՝ ձեռագրին մէջ տեղ տեղ թուականներու և անուններու մը պակասը, լուսանցքի վրայ յաւելումներ և երբեմն թեթեւ սրբագրութիւններ։

Մինչ անցնելով մեր Զեռագրատան միւս գրչագրին՝ որ նոյնպէս Ա. գ. 620 թիւը կը կրէ, յստակ և մաքուր նոտրագիր է, կանոնաւոր և կատարեալ՝ թուականներով և անուններով, առանց ո՞ր և է սրբագրութեան, բաղկացած 61 էջերէ, ուստի զրեւ թէ նախորդին կրկինը. այս առաւելութեամբ որ, բացի դէպքերու մանրամասնութենէն, ունի վերջաբան մը՝ ուր կը ձողկէ անմիաբանութիւնը՝ պատճառ քայքայման և կործանման, ինչ որ կը պակսի նախորդ ձեռագրին մէջ՝ այն է Հ. Ղուկասի գրածին, և յետոյ կու տայ Դաւիթ բէկի զօրավարներուն և անոնց բանակներուն և բանակետդներուն անունը. հուսկ Տէր Աւետիս քահանայ զօրավարին վրայ ներբող մը՝ նման կիլիկեան երգիչներու ողբերգ — զովեստին ի պատիւ ասպետ Լիպարիտի։

Վերջին երեք ու կէս էջ զբաւող երկու փոքր հատուածներու գիրը բոլորովին տարբեր է նախորդ 58 էջերէն, յայտնապէս նոր է, ամենայն հաւանականութեամբ օրինակուած Հ. Ղուկասի ձեռագրէն։

Հ. Ալիշան որքան որ Դաւիթ բէկի պատմութեան հեղինակ Հ. Ղուկասը կը համարի, սակայն իրականին մէջ ինք անծանօթ կը թուի Հ. Ղուկասի ձեռագրին, որովհետեւ եթէ տեսած ըլլար մակագիրը Հ.

1. «Սիսական», էջ 2.